Ջատագովության համառոտագիր
Հանրակրթություն և ՀԸԳՀ

Վերջին 3–4 տարիների ընթացքում գնահատվել են Հայաստանի հանրակրթության ոլորտում իրականացված բարեփոխումները՝ ըստ **Կրթության զարգացման պետական ծրագրի (ԿԶՊԾ)** և ՀՀ-ԵՄ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրով (**ՀԸԳՀ**) ստանձնած պարտավորությունների՝ հաշվի առնելով ինչպես բարեփոխումների օրակարգը, այնպես էլ դրանց իրականացման արդյունավետությունը: Ուսումնասիրության նպատակն էր որակական և քանակական մեթոդներով գնահատել կրթության **որակի և հասանելիության ու մատչելիության** բարձրացման նպատակով իրականացված միջոցառումների համապատասխանությունն ու արդյունավետությունը:

Հետազոտության արդյունքները հստակ ցույց են տալիս, որ Հայաստանի կրթական համակարգում բացակայում են պատշաճ **հաշվետվողականության** և **որակի ապահովման** մեխանիզմները, հատկապես՝ այնպիսիք, որոնք երաշխավորում են սովորողի անհատական ուսումնական առաջընթացը և կանխում **ակադեմիական առաջադիմության իրականությանը անհամապատասխան արձանագրումը**:

Հիմնվելով այս վերլուծության վրա՝ մենք ներկայացնում ենք հետևյալ հիմնական առաջարկությունները Հայաստանի կառավարությանը, Եվրոպական միությանը և ավելի լայն կրթական հանրույթին.

Առաջարկություններ

1. **Լրացնել ՀԸԳՀ-ի ճանապարհային քարտեզը՝** ներառելով հստակ պարտավորություններ՝ ինստիտուցիոնալացնելու բարձրացված բարեվարքության մեխանիզմները, և համապատասխանաբար վերանայել ԿԶՊԾ նպատակները: Այս միջոցառումները պետք է ներառեն՝
2. **Դասարանի ուսուցիչների կողմից լրացուցիչ դասապատրաստման** կամ սովորողին մասնավոր պարապմունքների ուղղորդելը որակել որպես բարեվարքության լուրջ խախտում և սահմանել կատարման ենթակա վարչական միջոցներ: Դիտարկել օրենքով արգելքների սահմանումը, որոնք կիրառվել են Վրաստանում, Հարավային Կորեայում և այլ երկրներում:
3. **Ակադեմիական առաջադիմության անհիմն արձանագրումը** որակել որպես բարեվարքության լուրջ խախտում՝ կիրառելով գործող վարչական միջոցները, հատկապես այն դեպքերում, երբ այն կոծկում է սովորողի ցածր առաջադիմությունը: Սահմանել հստակ և կատարման ենթակա վարչական պատասխանատվության մեխանիզմներ:
4. **Տեսչական մարմնին օժտել** բարեվարքության խախտումները բացահայտելու լիազորությամբ, ինչպիսիք են կանխամտածված ոչ լիարժեք դասավանդումը և **իրականությանը անհամապատասխան** ակադեմիական առաջադիմության անհիմն արձանագրումը::
5. **Վերանայել և բարելավել** երկարօրյա ուսուցման ծրագրերը ցածր առաջադիմություն ունեցող աշակերտների համար՝ ապահովելով հաշվետվողականություն բոլոր փուլերում՝ սովորողների ընդունելություն, առաջադիմության գնահատում և

արդյունքների վերլուծություն: Ծրագիրն ընդլայնել ՝ հնարավորինս արագ հասցեագրելու լայն տարածում ունեցող կարիքները: Ընդլայնել լուծումները՝ ներգրավելով արտաքին մասնագետների, ներդնելով ամառային դպրոցներ, կիրառելով այլ երկրների լավագույն փորձը:

6. Բարեփոխել Գնահատման և թեստավորման կենտրոնի (ԳԹԿ) գնահատման մեխանիզմները՝ ներդնելով ավելի մասնագիտական, բազմաշերտ և բազմաբնույթ գնահատման ձևաչափեր: Ապահովել սովորողների ուսումնառությանն իրական ժամանակում հետևելու հնարավորությունը՝ փաստահեն քաղաքականության որոշումներ և նպատակային միջամտություններ իրականացնելու համար

Վերոնշյալ առաջարկությունների հիմքում ընկած է այն տրամաբանությունը, որ Հայաստանի կրթական համակարգը պետք է հրաժարվի անցյալից ժառանգված արմատացած գործելակերպից, ըստ որի կրթությունը դիտարկվում էր որպես իշխող վարչակազմի քաղաքական և ֆինանսական նպատակներին ծառայող համակարգ՝ զուրկ լինելով կրթական առաքելությունից և որակի ու հավասար հասանելիության ապահովման հնարավորություններից:

Հեղինակ՝ Լարիսա Մինասյան, գիտությունների դոկտոր | larissa.minasian@gmail.com

Սույն հրապարակումը պատրաստվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ: Դրա բովանդակության համար պատասխանատվություն է կրում միայն հեղինակը՝ Լարիսա Մինասյանը, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության տեսակետները: